ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի միջև 24.12.18 կնքված ՆՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/63/64/65 ծածկագրով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի խմելու ջրագծերի կապիտալ կառուցման» աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «12» Հունիսի, 2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս գործադիր տնօրեն **Աշոտ Կիրակոսյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ն**, ի դեմս տնօրեն **Արայիկ Տեր-Պողոսյան**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով 24.12.18 կնքված**«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի խմելու ջրագծերի կապիտալ կառուցման»** աշխատանքների կատարման պետական գնման **N ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/63/64/65** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) **8.5 և 8.8 կետերի** դրույթները կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի **1.3 կետում** կատարել փոփոխություն, շարադրելով այն հետևյալ խնբագրությամբ. *«Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է 1-ին չափաբաժնի համար՝ 150 օր, 2-րդ չափաբաժնի համար՝ 140 օր, 3-րդ չափաբաժնի համար՝ 150 օր»*:
2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:
4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Միլաքս Գրուպ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Անմավիր, Արովյան 71
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ 04403097
Գործադիր տնօրեն	Հ/Հ՝ 2050322004821001
Աշոտ Կիրակոսյան	«Ինեկոբանկ» ՓԲԸ Արմավիրի մ/ճ
	Տնօրեն
	Արայիկ Տեր-Պողոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ